ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ>>

ք. Երևան <<20>> մարտի 2017թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ և <<Թունել>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս Ընկերության տնօրեններ Յու. Ջավադյանի և Ա. Սանահյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 06.03.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N 4 Հավելվածում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 55 420 200 (հիսունհինգ միլիոն չորս հարյուր քսան հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 թվականի ընթացքում Կատարողի մատուցման ենթակա Ծառայության դիմաց վճարումների առկա ֆինանսական միջոցները կազմում է 18 737 600 (տասնութ միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 55 420 200 (հիսունհինգ միլիոն չորս հարյուր քսան հազար երկու հարյուր) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Ծառայության մնացած մասը կմատուցվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն 2017 թվականին իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը

հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	<<Հայջրնախագիծ ինստիտուտ>>	<<Թունել>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՓԲԸ	ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
ՖՆ աշխատակազմի	ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12	<<Պրոմեթեյբանկ>> ՍՊԸ
գործառնական վարչություն	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ	Հ/Հ 1660000445850100
Հ/Հ 900011011716	Հ/Հ 1150000088680300	ՀՎՀՀ 02542333
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 00012859	
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար		
Մ. ՄԱԿԻՆՅԱՆ	ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ	Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 1
<<20 >> մարտի 2017թ. կնքված
N <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ>> ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն

1. **Տեխնիկական հսկողության հիմանական խնդիրները**

Տեխնիկական հսկողությունը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 <<Շինարարական որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ>>-ի հիման վրա: Տեխնիկական հսկողության հիմանական խնդիրներն են՝ ապահովել շինարարական աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծանախահաշվային փաստաթղթերին,, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության մասին օրենքներին:

2. **Ընդհանուր դրույթներ**

- Հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացվում է սկսած հիմնանորոգման աշխատանքների մեկնարկի օրից մինչև ավարտված աշխատանքների հանձնման ընդունման ակտի վավերացումը:
- Հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացվում է շինհրապարակի ամենօրյա այցելությամբ որոնք հաստատվում են տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարման միջոցով:
- Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, ստուգումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, շինարարական նորմերին և կանոններին:
- Տեխնիկական հսկողությունն ապահովում է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների որակը, կատարման տեխնոլոգիական պահանջներն ըստ գործող նորմերի և պետական ստանդարտների, ինչպես նաև աշխատանքային նախագծի տեխնիկական մասնագրերով նախատեսված պահանջների:

3. **Պարտականությունները**

- Մասնակցել կառուցվածքների ուղեգծերի նշահարմանը:
- Պարբերաբար ստուգել բոլոր կատարված հիմնանորոգման աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծային, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմանների:
- Ստուգել հիմնանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկանտների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և նախագծի ու ապրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպելով համապատասխան ակտերով և նույն օրը ներկայացնել Պատվիրատուին:
- Կապալառուի կողմից վարվող հիմնանորոգման աշխատանքների վարման ընդհանուր մատյանում նույն օրը կատարել գրառումներ հայտնաբերված թերությունների և դրանց վերացման վերաբերյալ:
- Մասնակցել հեղինակային հսկողության պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող հիմնանորոգման աշխատանքների որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:

- Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին:
- Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների փորձարկումներին և ստուգել համապատասխան փորձարկման ակտերը:
- Վարել հիմնանորոգման աշխատանքների ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը:
- Իրականացնել կատարված աշխատանքների տեսակների ու ծավալների ընդունումը ակտերի ձևակերպման միջոցով, ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի ձևակերպման հետ մեկտեղ կատարել նաև կատարված աշխատանքների տեսաձայնագրություն:
- Նախագծային լուծումների փոփոխությունների անհրաժեշտության դեպքում գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին:
- Կապալառու կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ կազմել և վավերացնել վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պատասխանատու է կատարողական ակտերում բերված աշխատանքների ծավալների և շինարարության որակի համար:
- Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:
- Կազմել ամսական հաշվետվություններ ներկայացնել Պատվիրատուին:

4.Իրավասությունները

- Հիմնանորոգման աշխատանքներ իրականացնող կազմակերպությանը տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հրահանգներ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ:
- Թերությունների հայտնաբերման դեպքում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ կառույցների կայունության և հուսալիության վրա, չթույլատրել շարունակել շինարարությունը՝ տեղյակ պահելով Պատվիրատուին:
- Արգելել պետական ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին չհամապատասխանող նյութեի, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների օգտագործումը,
- Չընդունել հաստատված նախագծերի, տեխնիկական պայմանների, շինարարական նորմերի և կանոնների խախտումներով անորակ նյութերով, շինվածքներով կամ կոնստրուկցիաներով կատարված աշխատանքները,

5. Կատարվելիք շինարարական աշխատանքների համառոտ նկարագիրը:

Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներն իրականացվելու են Վայոց Ձորի մարզ գ. Վարդահովիտ Եղեգիսի շին. հրապարակ հասցեում:
Նշված աշխատանքների համար կազմված է նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնց հիման վրա պետք է իրականացվի հիմնանորոգման աշխատանքները:

6. Շինարարության տեխնիկական հսկողության կատարման ժամկետը

Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի հիմնանորոգման աշխատանքներին զուգընթաց: Տեխնիկական վերահսկողին վճարումները կկատարվեն շինարարական աշխատանքների կատարողական ակտերով ներկայացված աշխատանքների արժեքների համամասնությամբ:
Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում՝ << կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը 2017թ. համար	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց օրվանից:	2017թ. համար նախագծով նախատեսված հիմնանորոգման աշխատանքների ավարտը

2018-2019թ.թ. ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՓԱ-ՍԵԱՆ N 2 ԹՈՒՆԵԼՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	
Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների համար կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերին զուգահեռ	կկնքվի Լրացուցիչ համաձայնագիր հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն

* Կատարողը ծառայությունները մատուցում է Վայոց Ձորի մարզ գ. Վարդահովիտ Եղեգիսի շին. հրապարակ հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ. ՍԱԿԻՆՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>>
ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859

ՅՈՒ. ՔԱՎԱՌՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
<<Պրոմեթեյբանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333

Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ

Հավելված 2
«20» մարտի 2017թ. կնքված
N ՀՀԷԵՊՆՋՏՊԿ-ԲՀՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունն	-	-	5 621 280	9 368 800	9 368 800	9 368 800	13 116 320	13 116 320	13 116 320	18 737 600	18 737 600	18 737 600	**18 737 600**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ. ՍԱԿԻՆՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859

ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Թունել» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
«Պրոմեթեյբանկ» ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333

Ա. ՍԱՐՍԱԿՅԱՆ
Կ.Տ

Հավելված 3
<<20>> մարտի 2017թ. կնքված
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<20>> մարտի 2017թ. կնքված
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ------- -ին կնքված N ---------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Հավելված թիվ 4
<<20>> մարտի 2017թ. կնքված
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ ծածկագրով գնման պայմանագրի

<<Արփա - Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ>>

Կապալի օբյեկտում նախատեսված վերականգնողական աշխատանքները իրականացումից կոնստրուկցիաների շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Հ/հ	Կոնստրուկցիաների անվանումը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
1	Ամրակապեր երկտավրերից	30
2	Ամրանակմախքներ	30
3	Երկաթբետոնե երեսարկներ	30

«Արփա - Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ» օբյեկտի նախատեսված վերականգնողական աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Հ/հ	Նյութերի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
1	Պողպատյա գլոցվածք (երկտավր, անկյունակ և այլն)	Այո	50
2	Ռելս Р-24	Այո	50
3	Պողպատյա խողովակներ	Այո	50
4	ՊՎԽ խողովակներ	Այո	50
5	Ամրանաձող	Այո	50
6	Ցեմենտ	Այո	10
7	Ավազ	Ոչ	30
8	Խիճ	Ոչ	30

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար
Մ. ՄԱԿԻՆՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859
ՅՈՒ. ՔԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
<<Պրոմեթեյբանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ.